ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՋՐԱՌ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք.Երևան 0010, Վարդանանց փակուղի 8, (6-րդ հարկ), հեռ.՝ 012 74-00-77, էլ. փոստ sevan_hr.axo@mail.ru

N 44
«04» 04 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀՏԿԵՆ «Ջրառ» ՓԲԸ-ի կողմից 30.01.2024 թվականին էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտարարվել է «ՀՀՏԿԵՆ-Ջ-ԷԱՃԱՊՁԲ-24/4» ծածկագրով պարոնիտի և մոմախծուծների ձեռքբերման ընթացակարգը, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև ՌԴ ռեզիդենտ հանդիսացող "PTK" ՍՊ ընկերությունը:

«ՀՀՏԿԵՆ-Ջ-ԷԱՃԱՊՁԲ-24/4» ծածկագրով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ, որպես բավարար գնահատված և նվազագույն գին առաջարկած մասնակից "PTK" ՍՊ ընկերությունը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով ճանաչվում է ընտրված մասնակից և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ուղարկվում է պայմանագրի նախագիծը, սակայն գնումների օրենսդրությամբ սահմանված ժամկետում կազմակերպությունը չի ներկայացնում իր կողմից ստորագրված գնման պայմանագիրը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով.

1. "PTK" ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Ընդունել ի գիտություն, որ «ՀՀՏԿԵՆ-Ջ-ԷԱՃԱՊՁԲ-24/4» ծածկագրով գնման ընթացակարգի նախահաշվային գումարը չի գերազանցում 25 մլն ՀՀ դրամը և մասնակիցները ընթացակարգին հայտի ապահովում չեն ներկայացրել :

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել «Ջրառ» ՓԲԸ-ի գնումների բաժնի պետի վրա:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ Ա. ԱԲԳԱՐՅԱՆ

Կատ՝. Ն. Ռաթևոսյան
Հեռ. 041-177-611